ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Նոյեմբերի 29-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետն ընդունել է 62 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր երեսունչորս, աշխատանքի տեղավորման՝ քսանվեց, բանկի կողմից տունը բռնագանձելու և համայնքի խմելու ջրի կարգավորման մասին՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից քսանյոթին տրվել է դրական լուծում, երեքը գտնվում է ուսումնասիրման փուլում, չորս դիմում մերժվել է:

Աշխատանքի տեղավորման մասին մեկ քաղաքացու դիմումի ընթացք է տրվել, քսանհինգ դիմումներ վերցվել են հաշվառման:

Մարզպետ Վ. Հակոբյանի հանձնարարությամբ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում ուսումնասիրման ընթացքի մեջ են բանկի կողմից տունը բռնագանձելու և համայնքի խմելու ջրի կարգավորման մասին դիմումները:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ